

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
7 մայիսի 2008 թ.
Պետական գրանցման թիվ 10208152

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

21 ապրիլի 2008 թ.
ք. Երևան

N 30-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով.

Հրամայում եմ՝

1. Սահմանել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պատվավոր աշխատող» կրծքանշանի ձևը (հավելված)՝ կցվում է:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Գ. Դանիելյան

Հավելված
ՀՀ արդարադատության նախարարի
2008 թվականի ապրիլի 21-ի
N 30-Ն հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՁԵՎԸ

1. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պատվավոր աշխատող» կրծքանշանն ունի ուռուցիկ վահանի տեսք: Այն պատրաստվում է արծաթից: Կրծքանշանի չափերն են՝ 50 մմ x 40 մմ x 2 մմ:
2. Վահանն ունի 1.5 մմ հաստություն, այն կեսից ներքև եզրագծված է հասկերով: Վահանի կենտրոնում, ուղղաձիգ տրամագծի չափով արտացոլված է 1.5 մմ հաստությամբ սուր՝ բռնակը

դեպի վեր: Վահանի կենտրոնում պատկերված է բացված թևերով արծիվ՝ 1.5 մմ հաստությամբ, որի ներքևի մասում տեղակայված է բացված գիրք՝ էջերի վրա կշեռքի պատկերով, որի հաստությունը 2 մմ է:

3. Վահանը կեսից վերև եզրագծված է Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշով, որի վերին կենտրոնական մասում տեղակայված է Հայաստանի Հանրապետության զինանշանը 1 մմ հաստությամբ:

4. Կրծքանշանի վրա պատկերված վահանը արծաթագույն է, Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ ոսկեգոծ, դրոշը՝ եռագույն ջնարակապատ, սուրբ, արծիվը, գիրքը և կշեռքը ոսկեգոծ են:

5. Կրծքանշանը ներքևում եզրագծված է 2 մմ հաստությամբ ոսկեգոծ ժապավենով, որի վրա կապույտ տառերով գրված է «ԴԱՀԿԾ»:

6. Կրծքանշանի հակառակ երեսին փորագրվում է կրծքանշանի հերթական համարը:

7. Կրծքանշանը հետին մասում ունի հագուստին ամրացնելու հարմարանք:

8. Կրծքանշանի պատկերը՝ համաձայն N 1 նկարի:

9. Կրծքանշանի հետ տրվում է միասնական նմուշի վկայական՝ համաձայն N 2 նկարի:

Նկար N 1



Նկար N 2

	 <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԳԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</p> <p>ՎԿԱՅԱԿԱՆ</p> <p>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԳԱՏԱՐՈՒՄԸ»</p>
--	---

	<p align="center">ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ</p>
--	--

<div data-bbox="289 457 571 793" data-label="Image"> </div> <div data-bbox="240 976 511 1012" data-label="Text"> <p>կրծքանշան N⁰ _____</p> </div>	<div data-bbox="831 361 1026 403" data-label="Section-Header"> <p align="center">ՎԿԱՅԱԿԱՆ</p> </div> <div data-bbox="880 457 977 487" data-label="Text"> <p align="center">_____</p> <p align="center">ազգանուն</p> </div> <div data-bbox="896 529 961 558" data-label="Text"> <p align="center">_____</p> <p align="center">անուն</p> </div> <div data-bbox="873 600 987 630" data-label="Text"> <p align="center">_____</p> <p align="center">հայրանուն</p> </div> <div data-bbox="685 651 1172 709" data-label="Text"> <p align="center">Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի</p> </div> <div data-bbox="782 709 1075 739" data-label="Text"> <p align="center">« » ____ 200 թ. N⁰ հրամանով</p> </div> <div data-bbox="841 772 1019 802" data-label="Text"> <p align="center">պարգևատրվում է</p> </div> <div data-bbox="711 835 1149 970" data-label="Text"> <p align="center">«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԳԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂ» ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ</p> </div> <div data-bbox="776 1003 1075 1033" data-label="Text"> <p align="center">ՆԱԽԱՐԱՐ Կ.Տ. _____</p> </div>
--	---